ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(ուղեցույց սովորողների համար)

ԵՐԵՎԱՆ 2019

Ողջույնի խոսք

Սիրելի՛ սովորողներ,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում հետևողական աշխատանքներ են իրականացվում սովորողների ինքնակառավարվող մարմնի դերի շարունակական բարձրացման, ինքնակառավարման կառուցակարգի զարգացման, Կրթահամալիրի բոլոր կարևոր խնդիրների լուծման և որոշումների ընդունման գործընթացներում ներգրավման ուղղությամբ: Այս նպատակներից ելնելով պարբերաբար կազմակերպվում են սովորողների հետ հանդիպումներ և քննարկվում են վերջիններիս հուզող բազմաթիվ հարցեր, որոնց գերակշիռ մասն առնչվում է սովորողի իրավունքների և պարտականությունների իրազեկվածության, վերջիններիս իրացման և կատարման ոլորտների հետ:

Կրթահամալիրի յուրաքանչյուր սովորող պետք է առավելագույնս իրազեկված լինի վարչական և ուսումնաօժանդակ մարմինների գործունեությունից և կրթական կարիքների վերհանման գործընթացներից: Ուստի սույն ուղեցույցի պատրաստման նպատակն է տեղեկացնել սովորողներին ներկրթահամալիրյան կրթական, ուսումնաօժանդակ մարմինների իրականացրած տարբեր գործընթացներին, որի արդյունքում սովորողներն իրենց հուզող բազմաբնույթ հարցերով կկարողանան դիմել համապատասխան ստորաբաժանումներին:

Ուղեցույցում ներառված է Կրթահամալիրում կրթական գործընթացը կանոնակարգող վարչական, ուսումնաօժանդակ համապատասխան ոլորտներին առնչվող տեղեկատվություն:

Հուսով ենք՝ ուղեցույցը կպատասխանի Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերին:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գեներալ-մայոր
Մուշեղ Բաբայան

Ուղեցույցը մշակվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդին կից՝ ստրատեգիական պլանավորման
և որակի ապահովման հանձնաժողովի կողմից:

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ոստիկանության կրթահամալիրում /այսուհետ՝ Կրթահամալիր/ ուսումնական գործընթացի ապահովման առաջնահերթություններից են որակյալ կրթական միջավայրի ստեղծումն ու ապահովումը, որոնց միջոցով Կրթահամալիրի սովորողները /այսուհետ՝ սովորողներ/ կկարողանան բացահայտել իրենց կրթական և այլ կարիքները, կստանան մասնագիտական համապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

2. Սույն ուղեցույցն ուղղված է մասնավորապես սովորողների գիտակրթական կարիքների ուսումնասիրմանն ու բացահայտմանը: Ուղեցույցի առարկայի շրջանակում Կրթահամալիրի նպատակն է ՝

1) աջակցել սովորողներին ուսումնագիտական գործընթացներում,

2) ուսումնասիրել և վերլուծել սովորողների կողմից վերհանված կարիքները՝ ուղղված կրթական գործունեության բարելավմանն ու կրթական համակարգի զարգացմանը,

3) սովորողների կողմից վեր հանված կարիքներին տալ համապատասխան լուծում,

4) ուսումնառության ընթացքում սովորողներին ցուցաբերել այլ աջակցություն:

3. Սովորողները կարող են ներկայացնել առաջարկություններ հետևյալ ուղղություններով՝

1) ուսումնական գործընթաց (դասավանդման որակ, ուսումնառության միջավայր և այլն),

2) գիտահետազոտական գործընթաց (գիտական լաբորատորիաների առկայություն և հագեցվածություն, գիտական աշխատանքների համար խորհրդատվություններ և այլն),

3) այլ ծառայություններ և գործընթացներ (կարիերայի զարգացում, սոցիալական աջակցություն, ուսման շարունակականություն և այլն):

4. Կրթահամալիրում սովորողներին ցուցաբերվող աջակցության ուղղություններն են ՝

1) մասնագիտական աջակցություն,

2) աջակցություն ուսումնական գործընթացում,

3) սոցիալական աջակցություն,

4) կարիերայի զարգացմանն ուղղված աջակցություն:

5. Կրթահամալիրում սովորողների կարիքների բացահայտման ակադեմիական և լրացուցիչ աջակցության օղակներն են ֆակուլտետները (ամբիոնները), ուսումնաօժանդակ գործառույթներ իրականացնող բաժինները:

II. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

6. Կրթահամալիրի վարչական անձնակազմի կողմից սովորողներին օժանդակելու աշխատանքներն իրականացվում են հետևյալ ուղղություններով.

1) սովորողների կարիքների ուսումնասիրում և կրթական միջավայրի բարելավում,

2) սովորողների ստեղծագործական կյանքի ապահովում,

3) սովորողների արտալսարանային աշխատանքների ապահովում,

4) սովորողների շրջանում տարաբնույթ միջոցառումների կազմակերպում,

5) սովորողների սոցիալական պաշտպանության կազմակերպում և ապահովում,

6) սովորողների շրջանում տեղեկատվության ապահովման համակարգի զարգացում,

7) ցածր կուրսերի սովորողների ուսումնական գործընթացին հարմարվելու աշխատանքների կազմակերպում,

8) բարձր առաջադիմություն ցուցաբերած սովորողների նկատմամբ խրախուսման համակարգի կիրառում:

7. Սովորողները հավելյալ օժանդակման համար, բացի վարչական անձնակազմից, սահմանված ընթացակարգով կարող են դիմել՝

1) Կրթահամալիրի պետին,

2) Կրթահամալիրի պետի տեղակալներին, այդ թվում՝ ուսումնական ստորաբաժանումների պետերին, տեղակալներին,

3) ֆակուլտետների, ամբիոնների պետերին:

8. Սովորողների աջակցմանն ուղղված հարցերը քննարկվում են՝

1) Կրթահամալիրի պետի մոտ հրավիրված խորհրդակցությունների ընթացքում,

2) Կրթահամալիրի այլ ստորաբաժանումների ղեկավարների և ֆակուլտետի (ամբիոնի) պետերի հետ հանդիպումների ընթացքում:

III. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

9. Կրթահամալիրի սովորողները ֆակուլտետ կարող են դիմել հետևյալ հարցերով՝

1) ակադեմիական տեղեկանքների տրամադրում (վճարովի հիմունքներով սովորողներ),

2) բացակայությունները հարգելի համարելու վերաբերյալ դիմումների և զեկուցագրերի ընդունելն ու ընթացք տալը,

3) ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստանալու նպատակով դիմումների ընդունումն ու ընթացք տալը (վճարովի հիմունքներով սովորողներ),

4) պրակտիկայի կազմակերպման հարցեր,

5) ստուգման բոլոր ձևերի, դրանց վերահանձնումների ժամանակացույցերի տրամադրում,

6) ըստ կրթական ծրագրերի՝ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգերով նախատեսված ստուգման ձևերի ընթացակարգային խախտումների և արդյունքների բողոքարկում,

7) լրացուցիչ խորհրդատվական գործունեության կազմակերպում,

8) ուսումնառությունն ընդհատելու, վերականգնելու կամ դադարեցնելու վերաբերյալ դիմումների և զեկուցագրերի ընդունելն ու ընթացք տալը,

9) ուսումնական և կազմակերպչական բնույթի այլ հարցեր:

IV. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

10. Կրթահամալիրի սովորողները ծառայության բաժին կարող են դիմել հետևյալ հարցերով.

1) ուսումնական պարապմունքներից ուշանալու կամ բացակայելու դեպքում,

2) ներքին ծառայության գրաֆիկում փոփոխություններ կատարելու դեպքում,

3) արձակուրդներին և հանգստյան օրերին ՀՀ–ից բացակայելու դեպքում,

5) անձնական նախաձեռնությամբ որևէ հասարակական միջոցառում կազմակերպելու կամ հասարակական ակտիվություն ցուցաբերելու դեպքում,

6) անձնական կամ այլ բնույթի խորհրդատվություն ստանալու դեպքում,

7) ծառայությանն առնչվող այլ դեպքում:

V. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱԴՐԵՐԻ ԵՎ ԱՀՏԱ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

11. Կրթահամալիրի սովորողները կադրերի և ԱՀՏԱ բաժին կարող են դիմել հետևյալ հարցերով.

1) ծանոթանալու Կրթահամալիր ընդունվելու կարգին,

2) Կրթահամալիրում սովորելու վերաբերյալ տեղեկանք ստանալու համար,

3) ծանոթանալու սովորողների բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովման համար նախատեսված աշխատանքների առանձնահատկություններին,

4) ծանոթանալու կարգապահական տույժերի տրման ընթացակարգերին,

5) ծանոթանալու ուսման բարձր առաջադիմության դեպքում ՀՀ ոստիկանության պետի անվանական կրթաթոշակ ստանալու կարգին և պայմաններին,

6) ծանոթանալու խրախուսանքների տրման ընթացակարգերին,

7) ծանոթանալու Կրթահամալիրի և սովորողի միջև կնքվող պայմանագրերի տեսակներին և անվճար ուսուցման դեպքում պայմանագրերով նախատեսված ուսման համար փոխհատուցման հիմքերին,

8) ծանոթանալու իր անձնական գործին,

9) ծանոթանալու հետաքննության, նախաքննության, դատական մարմիններում քննչական և դատավարական գործողություններին մասնակցելու կամ որպես վկա կանչվելու, վարչական պատասխանատվության ենթարկվելու, դատական ատյաններում քաղաքացիական գործերով որպես հայցվոր, պատասխանող կամ նրանց ներկայացուցիչ հանդես գալու, ինչպես նաև այլ վիճահարույց հարցերով իրավապահ մարմինների հետ առնչվելու յուրաքանչյուր դեպքում զեկուցագիր գրելու և ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությանն իրազեկելու պայմաններին:

VI. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

12. Կրթահամալիրի սովորողները ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժին կարող են դիմել հետևյալ հարցերով.

1) ծանոթանալու «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրում հոդվածներ տպագրելու ընթացակարգին,
2) գիտական միջոցառումներ կազմակերպելու կամ մասնակցելու համար,
3) գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով մասնագիտական գրականության տրամադրման համար,
4) ծանոթանալու Կրթահամալիրի գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ իրավական կարգավորումներին,
5) ծանոթանալու գիտական խմբակների պլաններին,
6) ծանոթանալու Կրթահամալիրի ասպիրանտուրա ընդունվելու ընթացակարգին,
7) ծանոթանալու (ասպիրանտներ) ուսման, կրեդիտների հավաքման հետ կապված գործընթացին:

VII. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՏ ՆԵՐԴՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

13. ՀՀ ոստիկանության կրթահամալիրի սովորողները միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժին կարող են դիմել հետևյալ հարցերով.

1) ստանալու գործող միջազգային փոխանակման ծրագրերի, սովորողների համար նախատեսված ծրագրերի, համաժողովների, սեմինարների, դասընթացների, կլոր սեղան-քննարկումների (առկա, հեռակա և առցանց) վերաբերյալ տեղեկատվություն,
2) ստանալու գործուղում մեկնելու նպատակով խորհրդատվություն և աջակցություն,
3) ստանալու տեղեկատվություն գործուղումից վերադառնալիս հաշվետվություն ներկայացնելու կարգի մասին,
4) հայտագրվելու առցանց անցկացվող, ինչպես նաև ցանցային գրանցում պահանջող միջազգային միջոցառումներին,

5) ստանալու Կրթահամալիրի հետ համագործակցող բուհերի և կազմակերպությունների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն,
6) ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն համագործակցող ուսումնական հաստատություններից (գրականություն, տեսաֆիլմեր, պրեզենտացիաներ և այլն),
7) ստանալու Կրթահամալիրի կայքէջում զետեղված տեղեկատվության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ,
8) Կրթահամալիրի կայքէջում և սոցիալական ցանցերում սովորողների կողմից կազմակերպված միջոցառումների վերաբերյալ լուսաբանման արժանի տեղեկատվություն տրամադրելու,
9) բաժնի գործունեության հետ առնչվող առաջարկություններ, նորարարական մոտեցումներ ներկայացնելու,
10) մասնակցելու բաժնի կողմից կազմակերպվող միջոցառումներին,
11) հրապարակելու հոդվածներ սովորողների համար նախատեսված միջազգային պարբերականներում,
12) ձեռքբերելու Կրթահամալիրի մասին շնորհանդեսներ, տեսաֆիլմեր և լուսանկարներ:

VIII. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

14. Կրթահամալիրի սովորողները տնտեսական բաժին կարող են դիմել հետևյալ հարցերով.

1) ապահովելու հանդերձանքով,

2) ապահովելու հանրակացարանային պայմաններով,

3) օգտվելու մարզադահլիճներից և խաղահրապարակներից,

4) տրամադրելու առանձին միջոցառումներ կազմակերպելու համար համապատասխան շենքային պայմաններ,

5) բարելավելու Կրթահամալիրի տարածքի, շենք-շինությունների, ջեռուցման և հովացման համակարգերի շահագործումը, էլեկտրաէներգիայի, խմելու ջրի մատակարարումը,

6) բարելավելու սանհանգույցների, բաղնիքների աշխատանքները: